

**ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր**

«ԶԱՄԲՈ»-Ը ԱՇԽԱՄՐԱԲԱՐՈՎ

Հոգողությամբ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի և մեկենասությամբ Տիգրան և Դիանա Հաճեթյանների (Կանադա, Մոնրեալ), վերջապես լույս աշխարհ եկավ Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Զամբո» կամ «Նշարակարան Էջմիածնի Սուրբ Աթոռի ո նրա շրջակա մյուս վանքերի մասին» աշխարհության աշխարհաբար թարգմանությունը՝ Նվիրված Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պարբիարքին և Կաթողիկոսին Ամենայն Հայոց Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման 1700-ամյակի առթիվ: Թարգմանիչ Վազգեն Համբարձումյանը Սիմեոն Կաթողիկոս Երևանցու թարձրարժեք աշխարհությունը, վերածած արևելահայ գրական հայերենի, ներկայացրել է ընթերցողի ուշադրությանը¹:

Աշխարհությունը բաղկացած է ներածական մասից (Եջ Ա-Ի-Է), քանի ինգ գլուխներ պարունակող բուն նյութից (Եջ 1-408), երկու խմբի բաժանվող ծանոթագրություններից (Եջ 410-543), առարկայական ցանկերից (Եջ 546-584), գերմիններից ու գերմինային անվանումներից (Եջ 585-604) և քարտեզներից:

Թարգմանությանը կցած ընդարձակ ներածականում թարգմանիչը հանգամանորեն ներկայացնում է Սիմեոն Կաթողիկոս Երևանցու կյանքն ու նրա «Զամբո» աշխարհությունը: Սիմեոն Երևանցին (1710-1780 թթ.), 1763 թ. օծվելով Ամենայն Հայոց Կաթողիկոս, փայլուն ծնունդ է կարգարել ոչ միայն իր՝ կաթողիկոսի պարբականությունները, այլ նաև գրել է մի շարք երկեր, ինչպես, օրինակ՝ «Զրուարան հոգևոր» (1772 թ.), «Պարբավճար» (1779 թ.), «Տաղարան փոքրիկ» (1793 թ.), 1774 թ. կարգավորել է Հայոց Տոնացույցը և այլն: Արդյունաշար Հայրապետի ստեղծագործությունների գլուխգործոցը և հայագիտության արժեքոր հուշարձաններից մեկը նրա «Զամբո» աշխարհությունն է, որը լույս է դրեսել հեղինակի մահից շուրջ հարյուր տարի անց (1873 թ., Վաղարշապատ): Դրանում հեղինակը մանրամասնորեն ներկայացրել է Հայոց Եկեղեցու պարմությունը, իրեն նախորդող կաթողիկոսների զահակալության դարինները, Հայոց Մայր Աթոռի թեմերն ու վիճակները, պարսկական և թուրքական իշխանությունների վերաբերմունքը Ս. Էջմիածնի հանդեպ, Երևանի խանության քանամեկ վանքերի պարմությունը և այլն:

Անվանի կաթողիկոսն ու պարմիջը, օգտվելով Վագաթանգեղոսի, Կիրակոս Գանձակեցու, Սրբ. Օրբելյանի, Առաքել Դավիթինցու, Զաքարիա Քանաքեցու, Աբրահամ Կրեպացու ավանդած գրեթե կություններից, ինչպես նաև՝ դիվանագիտական փաստաթղթերից ու օդար իշխողների վավերագրերից, ստեղծել է արժեքավոր մի աշխարհանք, որն այսօր էլ խիստ արդիական է ու կարևոր:

¹ Սիմեոն Կաթողիկոս Երևանցի. Զամբո. գրաբարից թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի. պարմատիստական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղայանի, «Մուղնի» հրատ., Երևան, 2003, 640 էջ:

Աշխաբության առաջին երեք գլուխներում հեղինակն անդրադարձել է Էջմիածնի Սուրբ Արոտի՝ մինչև 1441 թ. ընդգրկող ժամանակաշրջանի պարմությանը, մի ժամանակաշրջան, երբ Հայոց Կաթողիկոսությունը թողել էր իր Լուսավորչահասպատ աթոռանիստ Վաղարշապիր և փեղափոխվում էր փեղից փեղ: Խակ 1441 թ. ազգային-նկեղեցական ժողովում ընդունված որոշման համաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Վերահասպատվում է Էջմիածնում: Այսուհետեւ նա շարադրում է Էջմիածնի Սուրբ Արոտի պարմությունը՝ այն հասցնելով մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոս Մովսես Գ Սյունեցին կամ Տաթևանցին (1629-1632 թթ.): Դրանից հետո նա հանգամանորեն ներկայացնում է շուրջ հարյուր հիսուն դարիների Ամենայն հայոց կաթողիկոսների զահակալության պարմությունը, որը հասցնում է մինչև իր օրերը:

Մեծ հայրենասերն ամեն կերպ ձգվել է հասնել Հայոց Եկեղեցու միասնությանն ու համախմբվածությանը՝ ընդգծելով, որ Մայր Արոտ Սուրբ Էջմիածնին եղել է ու պեսքը և մեա համայն հայության հոգևոր կենցողունը: Այսպիսով, ինչպես նշվում է ներածականում, զրբի 1-12-րդ գլուխները նվիրված են Էջմիածնի Սուրբ Արոտի քաղաքական պարմությանը, իսկ 13-20-րդ գլուխները վերաբերում են Հայոց Եկեղեցու փնտեսական կացության նկարագրությանը: 21-24-րդ գլուխներում դրվագ է Հայոց Եկեղեցու իրավական կյանքի պարմությունը, իսկ վերջին՝ 25-րդ գլուխն ամբողջ աշխաբության ամփոփումն է:

Ծնորհիվ գրաբարի և ժամանակակից հայերենի հմուտ իմացության՝ գրքի թարգմանիչը՝ բանափառական զիկուրյունների դոկտոր, այրովեսոր Վազգեն Համբարձումյանը, կարողացել է հայութաբարել Սիմեոն Կաթողիկոս Երևանցու երկի լեզվական բոլոր դժվարությունները և կափարել հաջող թարգմանություն: Նա ամենայն պարասիստանարվությամբ է թարգմանել ամեն մի նախադասություն, անհրաժեշտության դեպքում փակազգերում ավելացրել է նոր բառեր կամ բառակապակցություններ, որոնց օգնությամբ նախադասության միվեր դարձել է պարզ ու հսկակ: Բներենք մի օրինակ. «Աշխարհը և (ամեն մի) աշխարհային, համաձայն սրբազն գրեթե սահմանման, մշղապես շարժման մեջ են և ենթարկված են զանազան փոփոխությունների, և այդ (ամենը փեղի է ունենում) այնքան խստորեն, որ (դրանք) չունեն ոչինչ հասկապունք» (Եջ 2):

Աշխաբությունն արժնվորվում է նաև լեզվական առումով, մասնավորապես պետրական, եկեղեցական, փնտեսական, իրավական բնագավառների բառերով, ինչպես նաև դրանց վերաբերյալ փերմինային միավորներով, որոնց համարժեքներն ու ճիշդ ծները կարողացել են գրնել ու դնել գրքի թարգմանիչը: Այսպես, օրինակ՝ Պատարայ-Լաւաշագիր, Վահուապնաւայ-Անիսիականացիր և այլն: Այս առումով Սիմեոն Կաթողիկոս Երևանցու լեզուն առանձնապես կարևոր է հայերենի զիկուրյան փերմինաբանության և հայոց լեզվի պարմական բառագիրության զարգացման ու հարստացման փեսանկյուններից: Աշխաբությունը հարուստ է բազմաթիվ նորաբանություններով, որոնք հիմնականում պարկանում են եկեղեցական փերմինաբանության ոլորտին: Այդ նորաբանությունները կազմված են հայերենի բառակազմական կանոնների համաձայն: Հանդիպում ենք նաև այնպիսի բառերի ու բառաձևների, որոնք կազմված են լադինարան հայերենի օրինակով: Ենդինակն օգտագործել է նաև բազմաթիվ օպար փեղանուններ:

Ի մոտք ծանոթանալով Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Զամբո» աշխաբությանը՝ կարող ենք ասել, որ այն լեզվական առումով ունի բազմաթիվ դժվարություններ, որոնք պայ-

մանավորված են նրանով, որ այս գրված է ոչ թե միայն այդ ժամանակի գրաբառով, այլև նրանում փեղ են զբել ժամանակի հոսակցական, գրական աշխարհաբարին հապուկ ձևեր ու ոճեր, ինչպես նաև օպար լեզուներից կարպակված փոխառություններ:

Թարգմանիչը բառաքացրություններին վերաբերող ծանոթազրությունների ցանկում գերպեղեկ է 270 բառ, որոնցից շուրջ 230-ը չկան Նոր Հայկացյան բառարանում, իսկ մյուսներն էլ փոխառություններ են պարսկերենից, արաբերենից, թուրքերենից: Ծանոթանալով այդ բառերին՝ նկատելի է, որ դրանց մեծ մասը բարդ բառեր են, իսկ մենացածը՝ ածանցակոր և բարդ ածանցակոր բառեր: Բարդ բառերի օրինակներ՝ աղասիամիտ, բազմօգութ, բամբակահան, թիրամիտ, լուսնաթի, կոնյական, հայրապետականիտ, ձախորդաբեր, սևագլուխ, սինագլուխ, վայրամիտ, վանաշեն, վտանգաշատ, փառապեր, փորձատիթ, քարտաշ, թրիսպուակենոր և այլն: Կան նաև բավական թվով ածանցակոր բառեր, ինչպես՝ անարգելորեն, անկաթողիկոս, երբեմնապէս, լաւապէս, հնձանատր, յաճախօրէն, ներհականիտ, ցանկապէս, քաղցրելողն(թ), օգլարտառութիւն և այլն:

Քիչ չեն նաև բարդ ածանցավոր բառերը, այսպես, օրինակ՝ անընդդիմաձառութիւն, դրանածախութիւն (դրամի ծախս), կնքադրութիւն, հայկազնէութիւն (հայկազնու և առ հայ լինելը), հոգէքաժնական, վերանորոգութիւն, վճառակարութիւն և այլն:

Ավելի քիչ են փարբեր գետակի բարակապակցությունները, ինչպես, օրինակ՝ անշեն դրամագրեղ, արզ առնել (դիմել, հայց ներկայացնել), արզ գրել (գրավոր դիմել), զուտ հանել (ուղերձ կտրել), ի քննութիւն մրանել, կանոն ճշճարդութեան, ճարտակուր լինել, յայն կուսացի (այնքեղացի), նուրբք և արդաքին զիրք (ասրվածաբանական զրերից ուրու), սերմանելի դեղի(թ), վկայական զիրք (վկայագիր), դրան և վեց և այլն:

Թարգմանիչը նշում է, որ Միմեն Կաթողիկոս Երևանցին գործածել է նաև լատինաբանության հապուկ ձևեր: Եվ դա բնական է, որովհետք այդ ժամանակաշրջանում լատինաբանությունը դեռևս խստա չէր հաղթահարվել: Այսպես, լատինաբանության օրինակով են կազմված հետեւյալ բառերը՝ *գրանեցեալ* (փիլ. գրեալ), *լինցելո* (փիլ. լինելոց էր), *սոյնոյ* (փիլ. սորին), *ներ պարսպի* (փիլ. ի պարսպի), *տրիս* (փիլ. տայր), *նոյնուի* (փիլ. նույնու), *տրետեալ* (փիլ. գրուեալ), *լնանին* (փիլ. լնուն), *տրին* (փիլ. գրուան) և այլն:

Նկափի ունենանով, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցին գործածել է բազմաթիվ տերմիններ, որոնց մի զգալի մասը կազմել է հենց ինքը՝ հեղինակը, թարգմանիչը դրանք առանձնագրել է և ներկայացրել առանձին զանկով:

Ինչ խոսք, թարգմանությունը չի կարող թերություններ չունենալ, բայց որ այն հիմնականում հաջողվել է, դա կասկածից վեր է: Մեր դիվողությունները հիմնականում վերաբերում են ծանրապես առաջարկություններին: Նախ՝ ավելի նպարակահարմար կլինիկ, եթե երկու հարյուրից ավելի այն բառերը, որոնք չեն արձանագրված Նոր հայկազյան բառարանում, թարգմանի-ը ներկայացներ ոչ թե ծանրապես առաջարկությունների խառն փեսքով, այլ այբբենական կարգի վերածած բառացանիկ ձևով:

Եզրափակելով մեր համառորդ խոսքը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սիմեոն Կաթողիկոս Երևանցու «Զամբո» աշխարհության աշխարհաբար թարգմանության կարիքը վաղուց էր հասունացել, և ուրախալի է, որ այն ի վերջո կայացավ: